1. Գեորգ Եֆենտի Ալյանեան , Ատենապետ .
2. Կարապետ » Մայխանեան , Ատենադպիր .
3. Կարապետ » Քիւրքճիսակեան .
4. Համբարձում » Էօմիքեան .
5. Միհրան » Շիրինեան .
6. Մարգիս » Տանճիկեան .
7. Վահան » Սուրենեան :

ՊԱՏՐԻԱՐՔԱՐԱՆԻ ՊԱՇՏՈՆԵԱԾՔ

Ա. ԵՃՆՈՎԱԼԻԱՆ ՊԻՒԱՑ. — Գեկը Վարդապետ Գայեմքեարեան՝ և Տիրայր Վարդապետ Մարգարեան Բարտուզարը :

ՊՈՐԴԱԿԱՏԱՐՔ Բ. ԴՐԱՑ. — Տիգրան էֆ. Տէր-Ներսոսիան՝ Ա. Դործակատար : Յարտորին էֆ. Գասպարեան՝ Բ. Դործակատար :

ԿՐՈՅԱԼԻԱՆ ՊԻՒԱՑ. — Խորին Ա. Քի. Փեհիվանեան՝ Տեսուչ, Տիրայր Վարդապետ՝ Օգնական : Հմայեակ Քի. Էքսկրեման՝ Ամուսնութեանց Դիւանադպիր : Եփրև էֆ. Փափազեան՝ Փոխանորդարանի Դիւանադպիր :

ՎԱՐՁԱԼԻԱՆ ՊԻՒԱՑ. — Բարրոյ էֆ. Թէկեան՝ Դիւանապետ : Նշան էֆ. Փափազեան՝ Դիւանադպիր : Գառնիկ էֆ. Հայկեան՝ Դիւանադպիր : Միհրան էֆ. Չուխանան՝ Դիւանադպիր : Հրանտ էֆ. Մարգարեան՝ Դիւանադպիր : Յակոբ էֆ. Նորիատեան՝ Դրազիր :

ՅԱՐԱՔԵՐԱԿԱՆ ՊԻՒԱՑ. — Կարապետ էֆ. Խաջանորդարան՝ Դիւանապետ : Միուն էֆ. Զաքարիան՝ Դիւանադպիր : Գեորգ էֆ. Բերինեան՝ Դրազիր :

Ա. ՐԱԴԱՆԱԳՐՈՒՐԵԱՆ ՊԻՒԱՑ. — Մկրտիչ էֆ. Մելիքեան՝ Տեսուչ, Նշան էֆ. Կիւրճեան՝ Դիւանադպիր : Արմենակ էֆ. Թէլլայեան՝ Դրազիր :

Ա. ՋԱԳԱԽԱՄԱՐՔԻ ՊԻՒԱՑ. — Սեպուհ էֆ. Բլատեան՝ Տեսուչ : Տիգրան էֆ. Նշանաձեան՝ Դիւանադպիր : Շանին էֆ. Գասպարեան՝ Դրազիր :

ԵԼԵՎՄԵՖԻԾ ՊԻՒԱՑ. — Միհրան էֆ. Զօպանեան՝ Տեսուչ : Լեւոն էֆ. Քիւրճեան՝ Դիւանադպիր : Խաչիկ էֆ. Մարգարեան՝ Արիզակալ : Յարեք էֆ. Հայրապետեան՝ Համարակալ :

ԲԱՐԱՎԱՐՈՒՄ. — Մարտիրոս աղա Խաջանորդեան՝ Բարավարում : Կարապետ աղա Սրապիան, Մելքոն աղա Օտապաշեան, Բաղես աղա Էրզրումեան, Պողոս աղա Սրապիան,

Ա. ԵՆԵԼԻԱՊԵՏՈՒՄ. — Ալոմ աղա Առոմեան՝ Պողոս աղա Պտէիսան, Սեղրաք աղա Օտապաշեան, Մելքոն աղա Պէտեան, Գրիգոր աղա Սուրենան, Սարգիս աղա Օտապաշեան:

— — — — —

ՆՊԱՍՏԻՑ ՅԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Նպաստից Յանձնաժողովը որուն պաշտօնն է օգոնել հայ կարօտեալներու, որբանոցներու և գաւառական վարժարաններու՝ կազմուած է 1898ին և նորոգուած 1902ին։ Անդամներն են։

Ամեն. Պատրիարք Արքազան,	Նախազան
Բարքող եֆ.	Թէլեան
Գառնիկ	Կիւլպէնիկեան
Եղուարդ	Գարակիօվեան
Երուանդ	Էսաեան
Միմոն	Գայսէրլեան
Տիրան	Կիւմիւչերտան

ՆՊԱՍՏԱԽՈՐԵՍՈԼ ՎԱՐԺԱՐԱՆՆԵՐ. — Այն զաւապին վարժարանները որոնց կ'օգնէ Նպաստից Յանձնաժողովը, հետեւալներն են։ — Պայպուղի վիճակին մէջ, Քաղաք, և Քամար ու Լոսոն զիւղեր։ — Բասենի վիճակին մէջ Խջուռ և Գոմանոր զիւղեր։ — Դերջանի վիճակին մէջ Քազակին և Փիրիզ զիւղեր։ — Խնձուսայ թեմին մէջ Հարամիկ և Քարամեօվիրի զիւղեր։ — Քղի վիճակին մէջ, Քաղաք, և Առինձ, Մելիքան, Քերքու և Մեզրէ զիւղեր։ — Ալաշկերտ թեմին մէջ Թորքազզալէ աւան, և Խաստուր զիւղ։ — Երզինկեանի վիճակին մէջ Սլելիքէրիք և Խենուրիկ զիւղեր։ — Աղթամարաց վիճակին մէջ Արտասե, Աւրանց, Խալիւ և Շատախի զիւղեր։ — Պիթլիսի վիճակին մէջ Առլիկի, Թեղուտ, Գալազան և Փառիսնոր զիւղեր։ — Մշոյ վիճակին մէջ Հազզոյ զիւղ։ — Կինծի վիճակին մէջ Արտէն և Տէփէն զիւղեր։ — Սղերդի վիճակին մէջ Քարի, Մերգի, Պատաման և Զանուս զիւղեր։ — Զարսանաքի վիճակին մէջ Քերրի, Մազիկերտան

Խոզար և Թերդեկ զիւղեր։ — Զմշկածազի վիճակին մէջ Յաղորով, Մեզրէ, Բազարոյն, Միատուն և Խապտու զիւղեր։ — Շապին Գարանիսարի վիճակին մէջ Ածաքե, Սկամսնիկ, Շիպեռի և Պուստիս զիւղեր։ — Ուրժայի վիճակին մէջ Էկնե և Պիրենիկ զիւղեր։ — Սոսանայի վիճակին մէջ Էկպէզ և Ֆասրլ զիւղեր։ — Զէյթունի վիճակին մէջ քաղաքին չորս քաղեր և Սլապտա, Սլապտան, Խարբուզ և Յանուզ զիւղեր։ — Կոկիսոնի թեմին մէջ Կոկոսոն, Թառուրուզ, Քիրէքրունար, Տէրէնեօյ, Տէօնիկէ. Տէյիրմէնուրէ, Կէօրունար, Ելինինեալ. Զիրիմէսուրէ, Կէվանի և Սլուտի զիւղեր։ — Մալաթիոյ վիճակին մէջ Հիւսնիմանուր, Պեհեսի և Բւլպիս զիւղեր։ — Տիվրիի վիճակին մէջ Սինենան, Միրվանա, Սուրբակոր և Վարմուրադ զիւղեր։ — Կիւրինի վիճակին մէջ Պարախատ զիւղ։ — Տարենտէ վաղաք և Սոսփի զիւղ։

ԱՐՄԱՇՈՒ ԴՊՐԵՎԱՆՔ

1900ի Հնդարձակ Օրացոյցին մէջ մանրաժամնօրէն խօսուած է Արմաշու Դպրեվանքին վրայ (տե՛ս էջ 175—186)։

Դպրեվանքին Խնամակալութեան անդամներն են։

Ամեն. Պատրիարք Արքազան,	Նախազան
Եղիշէ Եպիսկոպոս,	Վելատեսուչ
Տիրաման եֆ.	Խուսութեան, Անենապէս
Գաբրիէլ »	Գաբրիէլեան, Անենապէտ
Գեորգ Եպիսկոպոս	Գեորգեան
Արիկ եֆ.	Ունենան
Տիրգան »	Բարադամեան

Դպրեվանքին նպաստակն է եկեղեցականութեան փակիագ ունեցող երիտասարդները նոյն կոչման համար կրթել և պատրաստել։ Ընդունուելու համար գործ 18 տարեկան ըլլալու է։ Ուսմանց ընթացքը վեց տարի է։

1902 Նոյեմբերին՝ աշակերտներուն թիւն էր 30, այսինքն Չորրորդ դասարանի և սարկաւագներ և 6 դպիներ, որոնց փոխ-տեսուչն է Թորգոմ վրդ. Պիլիմեան, և առաջին դասարանի 20 նոր առնուած աշակերտներ, որոց փոխ-տեսուչն է Մեսրոպ վրդ. Նարոյեան :

Դպրեվանքին ուսուցիչներն են Վերատեսուչը՝ Եղիշ Եղիսի, Դուրեան, վերոյիշեալ երկու վարդապետները, թուրքերէնի ուսուցիչ Ստեփան էֆ. Թապագեան, զիտութեանց ուսուցիչ Բառնաբաս էֆ. Զաքարեան և Ֆրանսերէնի ուսուցիչ Ֆրանսացի Մ. Ֆլակէ :

ՎԱՐԺԱՐԱՆՆԵՐ

ԴԱԼԱԹԻՑ ԿԵԴՐ. Գ.Ա.ՐԺՈՒԹՈՒՆ. — Դալաթից կեդրոնական Վարժարանը բացուած է 1886 փետրուար 1ին. 1896ին կազմուած է արդի Խնամակալութիւնը որուն անդամներն են .

Յակոբ	Էֆ.	Էսահեան,	Ա.Տենապէս
Յովհաննէս	»	Մուրասեան,	Ա.Տենապիհր
Մազուր	»	Հարենց,	Գանձապէս
Հրանի	»	Ասանուր	
Մկրտիչ	»	Ասահեան	
Յակոբ	»	Յակոբեան	
Յովսէփ	»	Եռուսութեան	

1900ի Քնիրաճակ Օրացոյցին մէջ խօսուած է արդէն կեդրոնական Վարժարանի մէջ աւանդուած ուսմանց և վարժարանին ցարդ հասցուցած շրջանաւարտներուն վրայ (տե՛ս էջ 209—211) :

Կեդրոնական վարժարանը ունի այս տարի (1901—1902ի չքան) չորս դասարան : Աշակերտներուն թիւն է 83, հետեւեալ կերպով բաժնուած չորս կարգերու մէջ . Ա. Դասարան 44, Բ. Դասարան 19, Գ. Դասարան 10 և Դ. Դասարան 10 :

Վարժարանը ունի այս տարի 20 ուսուցիչ որոնց անունները և աւանդած առարկաներն են — Կրօնագիտութիւն և եկեղեցտկան պատմութիւն՝ Տէր Սահակ Աւագ Քն. Տէր Սարգսեան : — Հայերէն գրաբար և հայ մատնագրութեանց պատմութիւն՝ Յակոբ էֆ. Գուրգին : — Հայերէն աշխարհաբար, զրագիտութիւն և օտար մատնագրութեանց պատմութիւն՝ Հրանի էֆ. Աստուր : — Օսմաներէն, պարսկերէն, արաբերէն՝ Սեւիան էֆ. Կուրտիկեան : — Օսմաներէնէ Փրանսերէն և Փրանսերէնէ օսմաներէն թարգմանութիւն՝ Պողոս էֆ. Քերեսէնեան : — Օսմաներէն գեղագրութիւն, ընթերցանութիւն և ուղղագրութիւն՝ Գառնիկ էֆ. Բարունակեան : — Ֆրանսերէն լեզու՝ Պ. Շիրգիլ : — Ֆրանսերէն լեզու և թարգմանութիւն՝ Յովհաննէս էֆ. Հինդեան : — Անգլիերէն՝ Միհրան էֆ. Ճեմիզեան : — Գերմաներէն, նաև քաղաքակրթութեան պատմութիւն՝ Միխայիլ էֆ. Շալանանեան : — Իմաստասիրութիւն՝ Աքրահամ էֆ. Տէր Յակոբեան : — Պատմութիւն և աշխարհագրութիւն՝ Մարկոս էֆ. Նարանեան : — Ուսուղութիւն և բնական գիտութիւններ՝ Պ. Մաք Մակնիս, Յովհաննէս էֆ. Մուրասեան, Յովսէփ էֆ. Գոյութմանեան, Իգնատիոս էֆ. Մուրասեան : — Տոմարակալութիւն՝ Ստեփան էֆ. Սիրուն : — Գծագրութիւն՝ Խաչիկ էֆ. Թահրամեան :

Վարժարանին ընդհանուր հսկողն է Գառնիկ էֆ. Բարունակեան :

Կեդրոնական վարժարանի առաջին դասարանն ըն-

դունուելու համար աշակերտները պէտք է գրաւոր քննութիւն անցընեն հետեւեալ առարկաներուն վրայ .

Կրօնի. Քրիստոնէական զիտերիք: — **Հայերէն.** Աւետարանէ Թարգմանութիւն: — Գրաբար քերականական հարցումներ: — Աշխարհաբար պարզ նիւթի մը շարադրութիւն: — **Օսմանիերէն.** Հասարակ լնութեցանութիւն: — Ուղղագրութիւն: — Օսմաներէնէ հայերէն պարզ Թարգմանութիւն: — **Թրանիերէն.** Ֆրանսերէնէ հայերէն Թարգմանութիւն: — Հայերէնէ ֆրանսերէն պարզ Թարգմանութիւն: — Քերականական հարցումներ: — **Օսմանուր պատմութիւն.** Յունաց և Հոռոմեցոց պատմութիւն: — **Աշխարհագրութիւն.** Քաղաքական և բնական աշխարհագրութիւն հինգ մասերու: — **Թուրքանուրիւն:** — **Երկրաչափութիւն:** — **Կիճերութիւն:** — Գիճերու, անկիւններու և շրջանակի վրայ զործնական զիտերիք: — **Երաւագիտուրիւն:** Բնական զիտունեանց վրայ նախնական ծանօթութիւններ: — **Գ. ճագրուրիւն:** — **Գեղագրուրիւն:**

Մուտքի քննութիւնները կը կատարուին գրաւոր կերպով ամէն տարւոյ օգոստոսին :

Աշակերտի մը տարեկան թոշակն է 12 օմ. ոսկի , եռամսեան կանխիկ վճարելի : Սյն ծնողքներն , որոնք շատ համեստ դիրք ունենալով կարող չեն վճարել ամորով թոշակ , վատահելի վկայութիւններէ յետոյ՝ կիւսաթոշակ կրնան տալ իրենց զաւակները , եռամսեան միշտ կանխիկ :

Իսկ այն աշակերտները որոնց բոլորովին աղքատ ու անկարող ըլլալը Պատրիարքարանի կողմէ կը վկայուի , ձրի կընդունուին . սակայն Խնամակալութիւնը իրեն վերապահած է աղքատ ուսանողներու մէջ ընտրութիւն ընել և մուտքի քննութեան մէջ բաղդատաշար յաջողագոյն հանդիսացողները ձրի ընդունիլ վարժարան :

ՍՈ.ՆԱ.ՍՈ.ՐԵՒՆ. Վ.Ս.Ր.Փ.Ա.Ը.Ա.Ն. — Սանասարեան վարժարանը հաստատուած է Էրզրում 1881ին ձեռամբ բարեյիշատակ Մկրտիչ Սանասարեանի որ անոր գոյու-

թիւնն ու յարատեւութիւնը ապահոված է իր նույիրած և կատակած դրամագլխով : Սանասարեանի 1886 յուլիս 10ի կտակագրին համաձայն՝ կտակակատարներն են Վահեմ. Պ. Կարապետ Եղիանց , Պ. Գէորգ Եւանգուլեանց (վախճանեալ 1901 սեպտ. 16ին ի Տիմիս) և Պ. Լեռն Տիգրանեանց (վերջը հրաժարած) :

Սանասարեան վարժարանի Կ. Պոլսոյ Խնամակալութիւնը հետեւեալ կերպով կազմուած է .

Ամեն. Պատրիարք Մրբազան , Խախազան

Աբիկ էֆ. Ուննեան

Գաբրիէլ » Նորատունկեան

Գեորգ » Ալյանեան

Գրիգոր » Կիւմիւզկերտան

Պատրիկ » Կիւլպէնկեան

Վահան » Խսանեան

Արշակ » Գարակիօգեան Օժանդակ

Հրան » Ասատուր »

Վարժարանն ունի Էրզրումի մէջ աեղական Հոգաբարձութիւն մը , իսկ վարժարանին տեսչութիւնը կը վարեն Մկրտիչ Սանասարեանի երեք սաները Գէորգ էֆ. Արտէւեան , Յովաչիք էֆ. Մատաթեան , Սարգիս էֆ. Սոլիկեան :

1900ի Հնայածակ Օրացոյցին մէջ մանրամասնորէն խօսուած է արդէն Սանասարեան վարժարանի վրայ (տե՛ս էջ 211-217) :

Վարժարանը կը բաժնուի երկու մասի , Ուսումնական և Արհեստական , առաջինը եօթը տարուան ընթացքով , երկրորդն՝ երեք տարուան :

Ուսումնական բաժնի նախապատրաստական դասարանին մէջ ընդունուելիք աշակերտը պէտք է ըլլայ 11-13 տարեկան , ուշիմ ու առողջ , և ունենայ սա

ծանօթութիւնները . Հայերէն վարժ կարդալ , ընթեռնլի կերպով գրել : Քերականութեան Մատուին բանին գիտնալ , թելադրութիւն մը գրի առնել՝ առանց ուղղագրական խոշոր սխալներու , և թուաբանական չորս գործողութիւնները վարժ կերպով կատարել :

Արհեստագիտական բաժնին մէջ ընդունուելիք աշակերտը պէտք է ըլլայ 13-15 տարեկան , ուշիմ ու առողջ , և ունինայ այն ծանօթութիւններն՝ որոնք Հայ վարժարաններու յատուկ կազմական կանոնագրով սահմանուած են Տարրական նախակրթարաններու համար :

Վարժարանն ընդունուելիք ամէն աշակերտ պէտք է ներկայացնէ իր ծննդեան ու մկրտութեան , պատուաստի ու առողջութեան վկայականները , ինչպէս և Օսմանիյէ թեզթերէսին :

Թէ՛ Ուսումնական և թէ՛ Արհեստագիտական բաժնի իւրաքանչիւր զիշերօրիկ աշակերտի համար , պէտք է իրը տարեթոշատի վճարուի 20 օսմ . ոսկի որ կը պարունակէ աշակերտին սնունդի , հագուստի , լուացքի ու մաքրութեան , բժիշկի ու դեղի , ուսման ու դասագիրքերու և այլ ուսումնական պիտոյքներու ծախքերը : Կարելի է նաև տարեկան 12 օսմ . ոսկի միայն վճարել աշակերտի մը համար , պայմանաւ սակայն որ անոր զգեստի , կօշիկի , դասագիրքերու և դպրոցական ուրիշ պիտոյքներու , մահճակալի և անկողինի , ինչպէս նաև դեղերու ծախքը աշակերտին վրայ ըլլալով , վարժարանն անոր տայ մնունդ , ուսում և հոգայ միայն ուսացքի , բժիշկի և այլ ծախքերը :

Թէ՛ Ուսումնական և թէ՛ Արհեստագիտական բաժնի իւրաքանչիւր ցորեկօրիկ աշակերտի համար , պէտք է տարեթոշակ վճարուի 6 օսմ . ոսկի , որ կը պարունակէ միմիայն ուսման և ցորեկուան ճաշի ծախքերը :

Իւրաքանչիւր նորեկ գիշերօթիկ աշակերտի համար

պէտք է վարժարանի արկղին յանձնուի միանուագ Յ օսմ . ոսկոյ պահեստի գումար մը՝ իրը աշակերտին ճանապահնածախիք՝ երբ ընթացաւարտ ըլլայ և կամ եթէ որ և է պատճառաւ հարկ դատուի վարժարանէն արձակել զինքը : Պահեստի գումարին ամբողջը կամ մնացորդն եւ կը տրուի՝ երբ աշակերտը մեկնի վարժարանէն : Բայ կանոնագրին վարժարանը պէտք է ունինայ առնուազն 30 ձրիավարժ գիշերօթիկ աշակերտ :

Հիմայ վարժարանին Ուսումնական բաժնին ուսուցչական մարմինը կը բաղկանայ հետեւեալներէն . երեք տեսուչներէ որոնք կ'աւանդեն կրօնագիտութիւն , պատմութիւն , բնական գիտութիւններ , գերմաններէն , գծագրութիւն : Ուսուցիչ հայերէնի՝ Ս. Խաչտուրեան , ուսուցիչ ուսուղութեան՝ Դ. Ուսիկեան և Ս. Աղապալեան , ուսուցիչ տաճկերէնի՝ Ն. Թոք վայեան , ուսուցիչ Փրանսերէնի՝ Ժ. Բրէսք , ուսուցիչ բնական գիտութեանց՝ Գ. Ճիշերմեան , օգնական ուսուցիչ՝ Տ. Բրուտեան , օգնական ուսուցիչ և հսկող՝ Գ. Ղոյիննեան և Ս. Սողոմոննեան :

Արհեստանոցի ուսուցչութիւնը կը վարեն Սանապարեան երկու սաներ՝ Դէսորդ էֆ. Ճիշերմեան և Սիմոն էֆ. Աղապալեան որոնք իրենց մասնագիտական ուսումանց ընթացքը հիմնադիր բարերարին ծախքով կտուարած են գերմաննական արհեստագիտական բարձրագոյն վարժարաններու մէջ , և առաջինն ընդունած է բնական գիտութեանց մասնագէտ-ուսուցչի վկայագիր և երկրորդը կահագործութեան ու երկաթագործութեան արհեստագետի վկայագիր : Արհեստանոցին մէջ ուսուցչութիւն կ'ընեն նաև երկու ուրիշ արհեստագետներ ալ Ս. էֆ. Վահաննեան և Գ. էֆ. Գաւնակերեան որոնք արտասահմանի մէջ կատարելագործած են իրենց արհեստագիտական կրթութիւնը և վկայագիր ստացած են :

Վարժարանը 1902 օգոստոսին ուներ 190 աշակերտ
հետեւեալ բաշխմամբ .

Սանասարեան գիշերօթիկ սաներ	11
Սանասարեան ցորեկօթիկ սաներ	23
Զանազաններէ պաշտպանեալ սաներ	72
Թոշակաւոր գիշերօթիկ աշակերտներ	32
Թոշակաւոր ցորեկօթիկ աշակերտներ	52

190

Սանասարեան վարժարանը 1899-1900 շրջանին ու-
նեցած է 12 շրջանաւարտ, 9 ուսումնական բաժնէն և
3ը արհեստագիտական բաժնէն :

Վարժարանի տարեկան ծախքն է, ըստ ելմատցոյ-
ցի, գրեթէ 4000 օսմ. ոսկիի գումար մը որ կը հայ-
թայթուի կտակեալ արժէթուղթերու և Պոլսոյ ու Երա-
զբուժի մէջ գտնուած կալուածներու հասոյթներով,
և աշակերտներու թոշակներով :

ԱՅՐՊԱՐԵՍԱՆ. ՎԱՐԺԱՐԱՆ. — 1876ի Հոկտեմբեր
1ին բացուած է այս ցերեկեայ և գիշերօթիկ վարժա-
րանը, հիմնադիր-սնորէնութեամբ Ռ. Յ. Պէրաչերանի :
Գատըգիւղի մէջ հաստատուած, երկու տարի հոն մնալէ
ետքը՝ փոխադրուած է Սկիւտար, նախ Խատիէ, և
ետքը Սէլամուզ, Էքմէքճի պաշի փողոց, ուր կը մնայ
23 տարիներէ ի վեր : Արդի վարժարանն որ ընդարձակ
տուն մըն է ընդարձակ պարտէզով շրջապատուած՝ սե-
փականութիւնն է Հիմնադիր-Տնօրէնին : 1901 Հոկտեմ-
բեր 28ին կատարուած քանիւհինդակամեակին նուէր-
ներով վարժարանին շէնքը աւելի ընդարձակուած և
բոլորովին նորոգուած է :

Սուածին օրէն հիմնուած է նախական և երկրու-
գական ուսմանց ծրագրով : Վարժարանին նպատակն է,
ըստ ծրագրին, պատրաստել լուսամիտ և ազնուասիրտ
Հայ անհատներ :

Ուսմանց շրջանն ութամեայ տեւողութիւն ունի :
Ութը կարգերուն առաջին երեքը՝ այսինքն «Երախայից
երեք կարգերը» Նախակրթական կամ նախապատրաստա-
կան շրջանը կը կազմեն, ու վերջին հինգ տարիները՝
Ուսումնարանական շրջանը, որուն հինգ դասարանները
Կրտսերագունից, Կրտսերաց, Երիցանց, Երիցագունից և
Աւագա դասարան անունը կը կրեն :

Ուսումնական ծրագիրը կը պարունակէ . 1. Լեզու-
ներ (Արդի և հին Հայերէն, Օսմաներէն՝ Սրաբերէնի և
Պարսկերէնի տարերգով, Ֆրանսերէն՝ Լատիներէնի տա-
րերգով, Անգլիերէն, Գերմաներէն, Յունարէն) . 2.
Բնական գիտութիւններ (Բնական պատմութիւն, Բնա-
գիտութիւն, Բնալուծութիւն հանքային և գործարա-
նական, Բնախօսութիւն և Սոողջաբանութիւն) : 3.
Ուսուղական գիտութիւններ (Թուարանութիւն գործական
և աեսական, Գրահաշիւ, Երկրաչափութիւն, Եռան-
կիւնաչափութիւն, Գծագրական Երկրաչափութիւն,
Տարերք Մեքենագիտութեան և Տիեզերագրութեան) : 4.
Աշխարհագրութիւն և Պատմութիւնը ընդհանուր : 5.
Աղետական ուսմունի (Տոմարակալութիւն և Վաճառա-
կանական թղթակցութիւն) : 6. Դրագիտական ուսմունի
(Դրագիտութիւն, Պատմ. հայ և հին ու նոր գասական
դպրութեանց) : 7. Բարդական եւ ընկերական գիտութիւններ (Կրօնադիտութիւն, Հոգերանութիւն, Տրամաբանու-
թիւն, Պատմ. Խմառասիրութեան, Բարոյագիտու-
թիւն, Քաղ. Տնտեսութիւն և Տարերք Օսմ. Օրէնսդի-
տութեան) : 8. Գեղարվեստական ուսմունի (Գծագրու-
թիւն, Երաժշտութիւն և ձեռական աշխատութիւն) :
Ուսմանց զանազան ճիւղեր վերին կարգերուն մէջ
կ'աւանդուին օսմաներէն և ֆրանսերէն լեզուներով :

Վարժարանը կը մատակարարուի ցորեկեայ և գի-
շերօթիկ աշակերտներու վճարած թոշակներով, և չունի

բնաւ ուրիշ ո՞ր և է հասոյթի ազբիւր : Կանոնական թուշակը գիշերօթիկներու համար տարեկան 32 օսմ. ոսկի է, ցորեկեայներէն Նախապատրաստական կարգերու աշակերտներուն համար տարեկան 8. իսկ Ուսումնարանական շրջանի ուսանողներուն համար տարեկան 10 Օսմ. ոսկի . այսու հանդերձ վարժարանն ունեցած է միշտ բաւական թուով թերաթոշակ ունաել ձրիալար և աշակերտներ :

Վարժարանին ուսուցչական մարմինը բազկացած է այսօր 17 հայ և օտար ուսուցչներէ , բացի Տնօրէնէն, որ կ'աւանդէ անձամբ ոչ սակաւ դասեր , մասնաւորապէս լեզուագիտական , գրական և իմաստափրական ուսումներ և բարոյագիտութիւն :

Վարժարանն իր առաջին շրջանաւարտներն ընծայած է 1878 օգոստոսին և ցարդ ունեցած է 145 շրջանաւարտներ . իսկ աւելի կամ նուազ շրջանաւարտութեան մօտեցած մեկնելով գործի մանողներու թիւը շատ աւելի մեծ է : Բնթացաւարտները գրկած են այլ և այլ ասպարէզներ , առեւտրական , պետական , գրական , ուսուցչական , բժշկական , ճարտարապետական , գեղարուեստական , փաստարանական :

Պէրպէրեան վարժարանը 1902-1903 դպրոցական տարւոյն հետ թեւակոխած է իր իշտ տարեշրջանը :

ՄԵԶՊՈՒՅԵԱՆ ԱՊՀԱՍՆՅԱՎԱՐԺԱՐԱՐԱՆ . — Այս վարժարանն՝ որ 36 տարի առաջ հիմնուած և քանի տարիէ ի վեր փակուած էր , 1900 հոկտեմբերի մէջ բացուեցաւ նորէն՝ Գատըգիւղ : Յովիսան էֆ. Փալագաշեան և իր երկու քոյրերը , աշխատակցութեամբ Հիմնադիր Մեզպուրեան էֆէնտիի , կը վարեն վարժարանն՝ ուր կ'ընդունուին գիշերօթիկներ ալ որոնք կը վճարեն 30 օսմ. ոսկի , դաշնակի դրամով՝ 36 ոսկի ,

վեցամսեան կանխիկ : վարժարանը կ'ուսուցանէ, հայերէնէ և ֆրանսերէնէ զատ , փափագողներու թուրքերէն լեզուն , կար , ձեւ ու ձեռագործ , դաշնակ , գործիական ու ձայնական երաժշտութիւն , և առանին անտեսութիւն տեսական ու գործնական :

ՈՒՍՈՒՑՉԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ

1900ի Ընդունակ Օրացոյցին մէջ (էջ 202-204 բացատրուած է թէ ուսուցչական թեկնածուներն ի՞նչ պայմաններու մէջ կրնան ուսուցչական վկայական ստանալ և թէ մինչև 1899 ապրիլ 1 քամի՛ ուսուցիչ և ուսուցչուհի վկայական ստացած են : Հոս կը դնենք 1900ի 1901ի և 1902ի տարեշրջաններուն՝ կ. Պոլսոյ մէջ ուսուցչական վկայական ստացողներուն վիճակագրութիւնը . նախորդ տարիներու մէջ ոմանք Քննիչ Յանձնաժողովին միջոցաւ ներկայուած են Ուսումնական Խորհուրդին և ոմանք ալ ուղղակի Խորհուրդէն վկայուած են :

	1900ին	1901ին	1902ին
Օգնական ուսուցիչ	4 ..	32 ..	3
» վարժուհի	11 ..	10 ..	11
Դաստիարակ ուսուցիչ	1 ..	5 ..	1
» վարժուհի	— ..	2 ..	—
Օգնական Մասնագէտ ուսուցիչ	6 ..	6 ..	10
» » վարժուհի	1 ..	1 ..	1
Մասնագէտ ուսուցիչ	— ..	3 ..	—
» վարժուհի	— ..	— ..	16
	23	59	42

ՇՐՋԱՆԱՒԱՐՏՆԵՐ

1901ի Հնդարձակ Օրացոյցին մէջ (էջ 205) գրուած է մանրամասնօրէն թէ տարրական ու բարձրագոյն նախակրթանակութեառ շրջանաւարտներն ի՞նչ կերպով կը բանան ստանալ Ուսումնական Խորհուրդէն վաւերացուած վկայական, և թէ մինչև 1898ի վերջը ի՞նչ եղած է շրջանաւարտի քննութեանց արդիւնքը: Գալով վերջին չորս տարեշրջաններուն, 1899ին ունեցանք 15 շրջանաւարտ, 13ը աղջիկ և 2ը մանչ և 1900ին՝ 37 շրջանաւարտ, 19ը աղջիկ և 18ը մանչ: 1901ին՝ 65 շրջանաւարտ, 24 աղջիկ և 41 մանչ: Իսկ 1902ին՝ 117 շրջանաւարտ, 57 մանչ ու 60 աղջիկ:

ԱՐՅԵՍԱԿԱՆ ՎԱՐԺԱՐԱՆԻ ՑԱՆՉԱԺՈՂՈՎ

1880ի Սովետոց Յանձնաժողովին իրո շարունակուաթիւն՝ մնացորդ գումարը մատակարարելու և աճեցնելու, և յետոյ Սրհեստական վարժարանի մը ծախսին յատկացնելու նպատակով կազմուած է Յանձնաժողովը որուն անդամներն են.

Ամեն. Պատրիարք Մրգագան,	Նախագահ
Սահմակ էֆ. Դազարոսեան,	Ատենապետ
Մկրտիչ »	Մանուկեան,
Աբիկ »	Ունենեան
Աբել »	Կիւլյենկեան (Վախճանեալ)
Գառնիկ »	Յովակիմեան
Պատրիկ »	Կիւլյենկեան

Այս Յանձնաժողովը գաւառներէն եկած որբերուն արհեստական կրթութեան համար յատկացուցած է Ս. Փ. Հիւանդանոցին ամսական 50 ոսկւոյ գումար մը, մինչեւ որ նոր Որբանոցի շինութեամբ արհեստական վարժարանը հասաւառուի:

ԳԱԼՖԱՅԵԱՆ ԱՆՁԿԱՆՑ ՈՐԲԱՆՈՑ

Հաստատուած է 1866 յունուարին կ. Պոլսոյ Խառքէօյի մէջ: Որբանոցին հիմնադիր և Մայր հանգուցեալ Սրբուհի Մայրապետ Գալֆայեանի յաջորդած է՝ 1889 յուլիսին՝ Երանուհի Մայրապետ Յովհաննէսեան, որուն տեղակալն է Քրիստինէ Մայրապետ Փափաղեան: Որբանոցն անի խնամակալութիւն մը՝ Ամեն, Պատրիարք Սրբազն՝ Նախագահ: Անդամի՝ Բարթող Թէլեան և Կարապետ Խաչատուրեան: Տեսուչ՝ Ռեթէսու Թագէուս եան:

Որբանոցին նորատակն է անոք և անօգնական հայոր աղջիկ զաւակներ պատսպարել խնամել և դաստիարակել: Մինչև հիմայ, 34 տարուան մէջ, Որբանոցը կրցած է 460 անհայր, անմայր, փողոցները թափառող որբուհիներ պատսպարել, որոնցմէ 35ը տակաւին պատսպարեալ կը մնան, 3ը՝ մեռած են, 1ը կուսակրօնութիւն ուխտած է, 17ը՝ անզաւակ հայոց որդեգրութեան տրուած և 407ն ալ ամուսնացած ու ընտանիք կազմած են: Այս 478ը որբուհիներուն 3ը՝ Եղիպատոսէն, 1ը՝ Ռումանիայէն, 170ը՝ կ. Պոլսոյ զանազան թաղերէն, իսկ 304ը՝ գաւառուացի են: Առոնցմէ շատերը թէ՛ կ. Պոլսոյ և թէ՛ գաւառներուն մէջ դաստիարակուհուոյ և ուսուցչունեւոյ պաշտօններ վարած են:

Որբանոցին պատսպարեալները՝ կ'ումսին Հայերէն և Ֆրանսաերէն, Կրօնք, Թուարանութիւն, Աշխարհագրութիւն, Առոտնին անանեսութիւն. ասոնցմէ զատ կը սորվին նաև կար, ձեւ, ձեռագործ: Նոյնպէս վարժուելու համար, շաբաթական շրջանով, կը կատարեն Որբանոցին անական ծառայութիւնները՝ ինչպէս կերպակուր

եփել, լուացք ընել, տախտակ սրբել, աւել ածել, ևայլն :

Որբանոցին մէջ հիմայ կը պաշտօնավարեն 6 պաշտօնեայ : Տարեկան ժամաքն է 750—800 օսմ. ոսկի : Այսօր փոխարէն իրը հաստատուն եկամուռ ունի միմիայն ՎԵՆ. ՍՈՒԼԹՈՆ Ս.ՊՃ-ԻԻԼ-ՀԱՄԲԸ Բ. Դժառաստ կայսեր չնորհած հացի և մսի պարէնն, որ կը տրուի կայսերական Անձնական Դանձն և որուն տարեկանը կ'արժէ գրեթէ 20,000 զրու : Ասկէ զատ ունի նաև տարին 6000—7000 զրչի կալուածական հասոյթ : Իսկ մնացեալ ժամաքը կը հայթայթուի մասամբ բանուած ձեռագործներու արդիւնքով, և գլխաւորաբար թուրքիոյ և արտասահմանի բարեսէր Հայերու կամաւոր նուէրներով՝ որոնք վերջին տարիները պակսած ըլլալով՝ Որբանոցը այսօր 60,000 զրչի չափ պարտքի տակ ինկած է :

ՅՈՎԱԷՓ ԻԶՄԻՐԵԱՆՑ ԳՐԱԿԱՆ ՅԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Բարեյիշատակ Յովսէփի Իզմիրեանց, բնիկ Ղզլարցի, իր 1884 ապրիլ 3 թուակիր կտակագրով 10,000 բուպղի նուիրած է Հայոց և սահմանած է որ տոկոսը, տարեկան 600 բուպղի, Կ. Պոլսոյ Հայոց Պատրիարքարանի միջոցաւ իրը մրցանակ պարգև արուի ամէն տարի Հայոց գրականութեան, և պատմութեան վերտքերեալ լաւագոյն երկասիրութեանց հեղինակներուն :

Այս կտակին գործադրութեան համար Վերջին անգամ 1897ին կեղք. Վարչութեան Խառն Ժողովը Մնացուն Յանձնաժողով մը կազմած է «Յովսէփի Իզմիրեանց Պատրիան Յանձնաժողով» անունով, որուն անդամներն են :

Ամեն. Պատրիարք Մրբազան, Նախազանի
Գաբրիէլ էֆ. Նորատունիեան, Ստենապէտէ
Յովիաննես Ա. Գհ. Մկրեան, Ստենապէտէ
Վահան էֆ. Էսաւեան, Գանձապէտ
Գեորգ Եպիսկոպոս Երեցեան
Եղիշէ » Դուրեան
Տոք. Վահրամ էֆ. Թորգոնեան

1900ի Հնդարձակ Օրացոյցին մէջ մանրամասն տեղեկութիւններ տրուած են մրցանակի պայմաններուն վրայ (էջ 217-219) :

Մրցանակի նոր բաշխումը տեղի պիտի ունենայ 1903ին :

Յովսէփի Իզմիրեանց, Պատրիան մրցանակի մը հաստատութեան համար կտակած 10,000 բուպղին զատ, կտակած է նաև 10,000 բուպղիի ուրիշ գումար մըն ալ որուն տոկոսը, 600 բուպղի, յատկացած է էրզրումի կամ Մշոյ աղջկանց վարժարանին : Յանձնաժողովը 1897 սեպտ. 15ին սկսեալ այդ նպաստը յատկացուց Մշոյ աղջկանց վարժարանին որ հիմայ «Յ. Իզմիրեանց աղջկանց վարժարան» անունը կը կրէ :

Պատրիան Յանձնաժողովոյ յանձնուած է նաև Վանդիմսեան աղջկանց վարժարանին մատակարարութիւնը՝ հանգուցեալ Սանասարեանի կողմէ թողուած նպաստով, — Շահնազարեան վարժարանի դոյլերուն մատակարարութիւնը՝ յատկացնելու համար զանոնք հանգուցեալ Կարապետ վարդապետի կտակի գործադրութեան, — Աստուածատուր Ջունդի կտակի գործադրութեան հսկողութիւնը, — և վերջապէս Ղալաթիոյ Հայոց Մատենագարանին հոգը զոր 1900 սեպտեմբերին կեղք. Վարչութիւնը յանձնեց անոր :

Ս. ՓՐԿՉԵԱՆ ՀԻՒԱՆԴԱՆՈՅ ՀԱՅՈՅ

ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹԻՒՆ. — Սուրբ Փրկչեան Հիւանդանոցի արդի Հոգաբարձութիւնն որ ընտրուած է 1898 օգոստոս 4ին՝ հետեւեալ կերպով կազմուած է.

Պատրիկ	եֆ. Կիւլպենկեան, Ատենապէս
Գրիգոր	» Ալեանապեան, Ատենապիր
Տիր. Արքահամ պէյ	Նազարեան
Գրիգոր	եֆ. Էվլենեան
Գրիգոր	» Կիւլիւշիերտան
Տիր. Միքայէլ	Խորասաննեան
Յակոբ	» Արամպուխտան
Տիգրան	» Մանուկեան
Պողոս	» Էսէկենեան (Վախճանեայ)

ՈՐԲԱՆՈՅԸ. — Հոգաբարձութիւնը յատուկ ինսամակալութեան մը միջոցաւ կը վարէ Որբանոցի ուսումնական եւ արհեստական վարչութիւնը։ Այս ինսամակալութիւնը կազմուած է հետեւեալ կերպով։

Գրիգոր	եֆ. Ալեանապեան, Ատենապէս .
Զարմայր	Ճշմարտախօսեան
Լեռնի	Բանիկեան .
Յակոբ	Գորեան
Պողոս	Քերէսէնեան .

ՊԱՇՏՈՆԵԱՅՔ. — Գրասենեակի պատուանութեան։ — Մասունք կֆ. Խիւտավիշտեան՝ Տեսուչ գրասենեկի։ Հայրապէս կֆ. Շնորհեան՝ Համարակալ։

Հիւանդանոցի պատուանութեայք. — Վարդան Վրդ. Բրոյնորնեան, հոգեւոր պաշտօնեայք։ Տիր. Յոհանան կֆ. Շիրնեան, անօրէն։ Տիր. Միհրան կֆ. Զարդարեան, Վի-

րաբոյժ-բժիշկ։ Տիր. Նազարեան կֆ. Տաղաւարեան, բժիշկ ներքին հիւանդանութեանց։ Տիր. Լուիսի Մոնակորի, յիմարաբոյժ բժիշկ։ Տիր. Կարապէս կֆ. Իրջիձնեան, Տիր. Արշակ կֆ. Գաղագեան։ Տիր. Խայիկ կֆ. Պողոսեան ներքին բժիշկներ։ Յարութիւն կֆ. Ֆերհանեան, գեղագործ։

Արքանոցի պատուանութեայք. — Տիր. Գարբիկի կֆ. Նահանգեան, այցելու բժիշկ։ Յակոբ կֆ. Նիկողոսեան, տեսուչ։ Օր. Փուլուշ Զայեան, Ընդհանուր դաստիարակուհի Աղջկանց Արբանոցին։

Ա. ՀԱՍՏԱՏՈՒԹԵԱՆ ԶԱՆՁԱՆ ՄԱՍԵՐԸ

Այս Հաստատութիւննոր Ընդհանրապէս Ս. ՓՐԿՉԵԱՆ Հիւանդանութեան անուան առակ ծանօթէ հասարակութեան զանազան անջատ ճիւղեր ունի, որք են Հիւանդանոց, Ծերանոց, Անկելանոց, Արբանոց, Ռւսանողներու յարկ եւ Մամարան։

Ա. ՃԻՒԱՆԴԱՆՈՅԸ. — Հիւանդանոցն երկու ճիւղի բաժնուած է, Բժշկական եւ Վիրաբուժական, առաջինը 140 (100ը այլ եւ 40ը կին) եւ երկրորդը 85 (60ը այլ եւ 25ը կին) անկողին ունի։ Առականութեամբ վարակուածները (Tuberculeux), յիմար հիւանդները, թարախաւորները, եւ աղաք՝ թէ՛ արանց եւ թէ կանանց կողմը յատուկ որաներ ունին, կան եւ մասնաւորներու համար մէկ երկու անկողիննոց սենեակներ։

Հիւանդանոցի երկու ճիւղերն ունին իրենց բժիշկապեան եւ իւրաքանչիւրն իր օժանդակ բժիշկը։ Առաջինները շաբաթն երեք անգամ՝ իսկ վերջինները ամէն օր կայցեկն ու կարգաւ զիշերները կը մնան Հիւանդանոցին մէջ։

Հիւանդանոցն ունի 4 հակով մայրապեաներ (2 էրիկ մարդոց եւ 2 կիներուն կողմբ), 3 վիրագարման (2 էրիկ մարդոց եւ միւսը կիներու), 13 հիւանդապահ (10 էրիկ մարդոց եւ 3ը կիներու կողմբ) եւ 10 ուրիշ պաշտօնեայներ (զիշերապահ, մատակարար, մնունդներու բաշխող, լուգանքի պաշտօնեայ, սափրիչ, դռնապահ, հանդերձալուարհ), ընդ ամէնը 30 պաշտօնեայ, առանց հաշտելու բժիշկները եւ դեղագործները։ Դեղագործները երկու են եւ ունին չորս աշակերաներ։

Հիւանդանոյն ունի Վիրաբուժական ընտիր արան
մը , Վիրադարմանի երկու խուցեր , Ջրաբուժական
կրկին լսպարաններ (մին արանց եւ միւսոք կանանց կողմը) ,
թշչկական եւ հիւանդաներու ընթերցանութեան կրկին
մատենադարաններ եւ երկու հիւրանոց , մէկը արանց
եւ միւսոք կանանց կողմը :

Տարեկան 1600—1800 հիւանդներ կը գարմանուին հոն, որուց $\frac{3}{4}$ ը այր և $\frac{1}{4}$ ը կիներ են : Այս հիւանդներուն 1000—1100ը ներքին հիւանդութեանց ճիւզին կը վերաբերին, 600ր—700ր ժիրաբուժական բաժնին :

Ամէն կարգի հիւանդներ կ'ընդունուին . Ափրովիա-
եան հիւանդութեամբ վարակուածներ չեին ընդունուիր
մինչեւ վերջին ատեններս , այժմ անսնցմէ միայն անսնք
կ'ընդունուին սրսոց սոտքի վրայ դարմանումը ճնար է :

Աշքի, ականջի և կոկորդի հիւանդութեանց յառաւեկ ձիւղեր կային երբեմն, հիմա ջնջուած էն. երբ անոնցմէ ընդունուիլ հարկ ըլլայ, քաղաքիս հայ մասնագիտներու կը զրկուին դարմաներու համար:

Յետադպայ կրկին ցուցակները, քաղուած 1901 տարւոյ բժշկական կրկին ճիւղերու տեղեկադրէն, յստակ գաղտփար մը կուտանն Հիւանդանոցի գործունէութեան վրայ :

Ա. Ներքին ինւանդուրեանց բաժին

		Գումար	
Առևտիք	Վաճառք	Կախականաց	Վաճառք
Պատրաստ 1901 Յունի.	1	Ալիք	69
Դրաշնու	.	»	671
Արբանսց	.	»	77
Պաշտօնեայ	.	»	12
Ծերանսցէն	.	»	64
Ցիմարանսցէն	.	»	82
Աւանողներէն	.	»	17
			38
			107
			169
			840
			78
			155
			6
			18
			26
			90
			49
			131
			17
			1358

Ելք	Բժշկուած	Ս. լր.	478	Կին	122	600
	Բարեւոքուած	»	257	»	73	330
	Արձանագրուած	»	77	»	23	100
	Մեռած	»	159	»	75	284

¶iusrwus 31 *Fukm.* 1901 . » 67 » 27 94
1358

Բ. Վերաբռնմական բաժին

Պատրաստ 1901 թվականը. 1	62
Առաջ	631
	693

Այս ցուցակներէն կը տեսնուի որ ներքին հիւանդութեանց 1264 հիւանդները 234 մահ եւ վիրաբուժական բաժնի 647 հիւանդները 38 մահ տուած են, այսինքն 1911 հիւանդներու 272ը մնուած են, որով Հիւանդանոցիս մահականութիւնն է 1901 տարւոյ համար 9/0 14,19 : Եթէ ի հաշիւ առնենք եւ 20 հոգեւարք վիճակաւ Հիւանդանոցու եկողները՝ ունեցած կ'ըլլանք 1931 հիւանդի վրայ 292 մահ կամ 15,12 : Բաղդաստթեանդնենք այս միջինը նախօրդ քանի մը տարիներուն միջինին հատ :

1897/8	%	16,51
1898/9	%	19,37
1899/0	%	16,97
1900/1	%	15,10
1901/2	%	15,12

1901 տարւոյ մէջ պատապարուած հիւանդներէն դահճռուած է 33441 դրուց :

Բ. ԾԻՄԱՐՍՆՈՑ. — Յիմարանոցը գրեթէ 300 պատուապարեալներ ունի սրանց 200ը այր և 100ը կիններ են : Առանց թիւը գմբախարար աւելնալու վրայ է, որով եւ վերջին տարինեալ Յիմարանոցի արանց և կանանց բաժիններուն յաւելուած ական չենքերս արդէն լեցուած են ու յիմարները պատօն են նեղութիւ :

Յիմարանոցն ունի յիմարապյժ մը և եւ օդնական բժիշկ մը . առաջինը շաբաթն երկու անգամ կ'այցելէ, իսկ իր օժանդակը ամեն օր : Արանց եւ կանանց բաժիններին ունին իրենց ընդհանուր հսկող պետքը զատ 15 յիմարապահ (10 արանց եւ 5ը կիններու բաժնին մէջ) :

Յիմարները երեք դասի բաժնուած են .

Ա. Տեւական, անդաբամանելի եւ հանդարտ յիմարներ որոնք աշխատառ կ'անուանուին եւ Հաստատութեանս

աշխատովթեանց կը գործածուին : Բ. Յուզման ևնթականեր : Գ. Շոաննաները , ապօւշներն եւ աղայք : Այս երեք կարգն ալ արանց կողմն ունին իրենց յատուկ յարկերը . կանանց կողմը այս բաժանումները գոհացուցիչն չեն տեղւոյ անձկութեան պատճառաւ :

Յուղեալ յիմարները մասնաւոր խոցերու մէջ կը դրուին կամ բանազգեստ հագցընել կուտան (camisole de force) . զանակոծումն ի սպառ արգիլուած է :

Յուզակ Շիմարտինցի 1904 արւելյ

Այս տարրությունը չըջանին ողասապարուած յիմարներէ իբր ամսաթոշակ 55,043 դրշ. գանձուած է :

Գ. ԽԵՐԱՇԽՑ և ԱՆԱԼՈՒՅՑ. — Ծերանոցը
անոց և ծեր աղպայիններու յատկացուած յարկ մըն է :
իսկ Անկելանոցը անկարող և անտէր անձերու , փորձա-
նաւոր աղջկանց ու լքհալ կիններու յատուկ է :

Այս յարկերու մէջ պատսպարհաներն առօրեայ Յ ժում մնունդէ զատ կընդունին ծխախոտ եւ սուրճ պատրաստելու համար սուրճ ու շաքար :

Ծերտունիներն եւ անկեալներն իրենց տրամադրութեան տակ ունին մատունագարան մը, եւ կրնան Հաստատութեան մատուոին ժամերգութիւններուն ներկայ գտնութիւն եւ պարաէղներու մէջ ժուռ զալ :

1901ի Յունի. 1ին ունէինք 146 ծեր եւ անկեալ որոնց 14ը արու են եւ 32ը կին կամ աղջիկ . ասոնցմէ , այս տարուան մէջ , իրու ամսական զանձուած է 5796 դրու :

Գ. ՈՐԲԱՆՈՅ. — Որբանոցն ունի Հոգաբարձութեան Ընտրուած մասնաւոր Խնամակալութիւն մը որուն ասանապեան է Հոգաբարձութեան անդամներէն մէկը , և Տեսուչի մը ձեռքով կը վարէ Որբանոցը : Հաստատութեանու Որբանոցի սաներու թիւն է զրեթէ 308 որոնց 230ը մանչ եւ 78 աղջիկ են : Աղջիկները 78 եւ մինչեւ 7 տարեկան պղափկ մանչերը 36 են եւ Հաստատութեանու մէկ յարկին մէջ կը գտնութիւն իսկ 7 տարեկանէն վեր մանչերը մօտակայ Ա. Յակոբայ վանուց մէջ կը մնան :

Սանուց շուրջ $\frac{3}{4}$ ը գոււառացի եւ $\frac{1}{4}$ ը պոլսեցի են կամ աւելի ճիշդ ըսելու համար 74ը պոլսեցի են եւ 234ը գոււառացի : Կ. Պոլսեցիներու 7ը ցորեկեայ են ամէնն ալ մսնչ , 4ը մնծ եւ 3ը եօթ տարեկանէն վար :

Այս տարուան յշջանին մէջ թոշակաւորներէ զանձուած է $14326\frac{1}{2}$ դրու :

Որբանոցի ծրագիրն է Ռւսումնական Խորհրդոյ կազմական կամունագրի Նախակրթաբանի ամբողջ դասընթացքը :

Նախորդ տարուան մէջ աւելցաւ նաև երկրագործական գաս մը մանչերու Որբանոցի երկու վերջին տարիներու մէջ աւանդելի :

Աշակերտաներն օրը 4 ժամ զատ ունին :

Երեք տարիէ ի վեր հաստատուած են կօշկակարու-

թեան , գերձակութեան , կահագործութեան եւ սոսայնանկութեան արհեստանոցներ որոնց կը հետեւին յատուկ որոշեալ պատանիներ . ասոնց օրակուն 1—2 ժամ զառ ալ կը տրուի :

Որբանոցը տեսուչէն զատ ունի 13 մնայուն զատափարակ որոնց 7ը մանչերու եւ 5ն աղջիկներու կողմը . կան նաեւ 6 այցելու ուսուցիչներ եւ 1 այցելու բժիշկ :

Որբանոցի պաշտօնէից եւ գպրոցական պիտոյից տարեկան ծախքն է գրեթէ 750 սկի : 1901 տարւոյն ծախուց գումարն եղած է $78528\frac{3}{4}$ դրու :

Ե. Ռւսանովի. — Ալու գասակարգը շփոթելու չէ Որբանոցի սաներուն հետ : «Ռւսանով» կ'անուանենք այն ամէն արական սեռէ որը եւ անդաշտպան պատանիներն որոնք կամ մայրաքաղաքիս մէջ բարձրագոյն վարժարան մը կը յաճախուն եւ կամ արհեստի մը կը հետեւին քաղաքիս կամ Հաստատութեան մէջ :

Այս պատանիներն ընդհանրապէս որբանոցին շրջանաւարտներ են , երբեմն ալ ուսման արհեստաւոր որբեր եւ կամ գրուն եկաղներ :

Վարժարաններ յաճախով ուսանողներն երբ շրջանաւարտ ելլին , եւ արհեստաւորներն երբ Դալֆայի տատիճանին հասնին՝ կը հեռանան Հաստատութենէն : 1902 Յունի. 1ին կային 30 ուսանող որոնց 2ը բժշկական , 3ը դեղագործական , 4ը կեդրոնական Վարժարանի կը հետեւին . իսկ 5ը մոմագործութիւն , 4ը գեղագործութիւն , 4ը թիթեղագործութիւն , 2ը գերձակութիւն , 2ը տաղձագործութիւն , 1ը մեքենավարութիւն կ'ուսանին եւ 3ը Հաստատութեան Տնօրինութեան գիւանի օֆանդակ գրադիրներ են :

Զ. Մոմարտն. — Հաստատութիւնս ի վազուց անափ ունի իր մէջ Մոմարան մը ուր կը պատրաստուին Մայ-

բաքաղաքիս եկեղեցիներուն եւ հարսանիքներուն մումերը : Հաստատութեանս Մոմարանը մայրաքաղաքիս նոյնատեսակ զործարաններու առաջինը կրնայ համարուիլ եւ ամէն կերպով կրնայ գիրազանցել զանոնք :

Մոմարանը տարեկան զրեթէ 200—250 ոսկի շահ մը կուտայ Հաստատութեանս : 1901 տարւոյ Մոմարանի դուռ շահն եղած է $246547\frac{7}{8}$ դրուշ :

Բ. ՀԱՍՏԱՏՈՒԹԵԱՆՍ ՕԺԱՆԴԱԿ ՄԱՍԵՐԸ

Ա. Դեղարան . — Հաստատութիւնս ունի գեղարան մը ուր կան 2 վկայուած վարպետներ եւ 4 աշակերտներ : Դեղարանի տարեկան ծախքն է $33630^{1/2}$ դրւ. :

Բ. Հանդերձառուն . — Հաստատութիւնս ունի հանդերձառուն մը ուր կը պատրաստովին Հաստատութեանս պատապարեալներուն ճերմակեղիներն ու զգեստները , եւ ուր մասնաւոր քանակաւ ճերմակեղին եւ զգեստնեղին պատրաստ կը գանուին : Հանդերձառունը լաւ հակողութեան մը ենթարկուած է եւ ունի մասնաւոր պաշտօնեայ մը : Հանդերձառան տարեկան սպառումն է 900—1000 ոսկի :

Գ. Լուացարան . — Պետ լուացարարունոյ մը լուացարանը յանձնուած է՝ ուր կ'աշխատին տանսականաւոր լուացարարունիներէ զատ Անկելանոցէն աշխատելու կարող կիներ : Ճերմակեղիները մասնաւոր ջեռոցի մը միջնաւ կ'եռացուին : Լուացքը շատ մաքուր է :

Դ. Բաղնիք . — Հաստատութիւնս Հիւանդանոցի յատուկ լոգարաններէ զատ ունի նաեւ ասիական բաղնիք մը ուր կարգաւ կը լուացուին ճերերը , անկեալ-

ները , յիմարհները , ուսանողները , որբերն եւ պաշտօնեաները :

Ե. Մառան եւ Մքերանոց . — Մառանաւոր պաշտօնեալի մը հակողութեան յանձնուած է Հաստատութեանս մառանը , եւ փայտի , ածուխի ու քարիւղի մթերանոցները :

Մառանէն եւ Մթերանոցէն որ եւ է պարէն կամ նիւթ դուրս չելլեր առանց Տնօրէնութեան գրաւոր հրամանին :

Մննդեան մասին տարեկան զրեթէ 5000 ոսկի կը ծախսուի : Լուսաւորութեան , ջեռուցման եւ մաքրութեան համար տարեկան սպառումն է 600—700 ոսկի :

Զ. Խոհանոց . — Խոհանոցը Հաստատութեանս ամէնէն աւելի վայելուչ , մաքուր ու լաւ սկսուած մասներէն մէկը կրնայ համարուիլ : Խոհանոցը ունի վարպետ խոհարար մը եւ երեք օգնականներ :

Է. Անամնարան . — Անամնարանն երկու ուրոյն մասներէ կը բազկանայ , 1. Գոմ ուր կը գանուին Հաստատութեանս կաթ մատակարարով կովերն ու իրենց հորթերը , 2. Ախոռ ուր կը գանուին Հաստատութեանս պիտոյից անգամագութեան յատկացուած ձիերը :

1902ի սկիզբը գոյմը ունէր 22 կոլ , 2 ցուլ , 6 հորթ . իսկ ախոռը 3 ձի :

Տարեկան զրեթէ 17,500 օխա կաթ կ'առնուի գոյմէ եւ զրեթէ 7,000 օխա ալ դուրսէն կը գնուի :

Ծ. Արհեստաւորներ . — Հաստատութեանս մէջ կը գանուի արհեստաւորներու յուումի մը , ատաղձագործ , թիթեղագործ , երկաթագործ , զերձակ , հնակարկատկօշկակար , մեքենավար , որմնաշէն-հիւմն , որոնք միակ Հաստատութեանս պիտոյից կը ծառային :

Այս արհեստաւորներուն ումանց քով աշակելաներ կը դրուին ուսանողներու դասակարգէն :

Թ. Մատենադարան եւ Գիւան . — Հաստատութիւնս ունի զլիսաւոր մատենադարան մը եւ 4 մասնական մատենադարաններ . 1. Բժշկական , 2. Հիւանդանոցի , 3. Ծերանոց Անկելանոցի , եւ 4. Որբանոցի . ընդամէնը զրեթէ 47800 կտոր զիրք պարունակելով :

Հաստատութիւնս ունի զիւան մը ուր կը պահուին Հաստատութեանս տոմարներն եւ թղթեղէնները :

Փ. Պարտէզներ . — Արանց եւ կանանց կրկին Յիշմարանոցներն ունին մասնաւոր պարտէզներ , իսկ ապաքինած հիւանդները , ծերուիները ու անկեալները կեղրուական մեծ պարտէզն մէջ ժուռ կուգան :

ՓԱ. Մատուռ . — Հաստատութեանս մէջ կը գըտնուի Ս. Փրկչի մատուռը ուր ամէն օր ժամնրգութիւն կ'ըլլայ ու Հոգաբարձութեան կողմէ ընդունուած Հոգացոյ պատարացներ եւ պաշտօններ կը կատարուին :

Մատուռն ունի մէկ հոգեւոր հովիւ , օգնական քահանայ եւ մէկ լուսարար :

Ս. Յակովայ Վանուց մէջ , ուր կը գտնուի մանչերու Որբանոցը , կայ Ս. Յակովայ մատուռը :

Գ. ՀԱՍՏԱՏՈՒԹԵԱՆՍ ԿԱԼՈՒԱՇՆԵՐԸ , ՎԱԳՖՆԵՐԸ ԵՒ ԳՈՅՔԸ

Հաստատութիւնս 178 կտոր վազգէ զատ ունի նաև 100է աւելի մեծ ու փոքր կալուածներ , զրեթէ 14,000 սոկի արժուալութեամբ . ասոնց տարեկան եկամուտն է զրեթէ 750 սոկի :

Հաստատութիւնս կ'ընդունի տարեկան 15 հաստատուն կտակէ 3518 դր . եւ 2 կտակներու արամադրութեան համաձայն կը վճարէ 1650 դրուշ :

Հաստատութիւնս ունի 181 հատ երկաթուղւոյ արժեթուղթ , 7 հատ Ռուսական պարասատոմս , 4 Քրէտի ֆոնսիէ էժիրսիէն , 1 Պուլկարական պարտաթուղթ , 1 Վլու ար Լիոն , 7 Վլու ար Պրիւքսէլ , 1 Էմուլսի իթամ եւ 300 հատ Օսմ. Քոնսոլիա զրեթէ 122,968 $\frac{3}{4}$ դր . արժէքով :

Ցուցակ եկեմափց 1901 տարւոյ

Առևֆ

1.	Կալուածք	Կալուածք	81,385 $\frac{1}{2}$
		Պարտէզի վարձք	2,680
		Զիթասսան	2,160
		Պոստանի միւլքի վարձք .	500
2.	Վագֆի հասոյթ		3,523 $\frac{1}{4}$
3.	Եպասա կառավարութեան հաց եւ միո		376,885
4.	Թոշակ Մալիէի		23,421
5.	Կտակեալ զրամ		19,183
6.	Արհեստական վարժ . ինամ . (600 սոկի)		64,800
7.	Պահանջներու տոկոս		108,00
8.	Արժեթղթոց կտակներէ եւ լիթամի տոկ.		2,904
9.	Մամարանի շահ		24,654 $\frac{7}{8}$
10.	Ցնցոսատան հասոյթ		4,208 $\frac{1}{2}$
11.	Սիկառի թուղթի հասոյթ		16,021
12.	Դպրոցական տետրակներու կնքում .		78
13.	Օրացոյցի հասոյթ	Պարու Բնու	55,874 $\frac{3}{4}$ 40,362
			96,236 $\frac{3}{4}$
14.	Անցագրատուն		13,356
15.	Եշանստութենէ		19,176
16.	Եկեղեցիներու եւ Հաստատութեանս գանձանակներէ		18,228 $\frac{1}{2}$

17.	Եկեղեցեաց պնակներէ	25,175 ¹ / ₂									
18.	Առանին գանձանակներէ	13,358									
19.	Ս. Փրկչի մաշ Բանկալ	2,908									
	տուսի հասոյթ թղմն. նուէր 2,690	5,598									
20.	Ննջեցելոց աւանդներէ	1,916 ¹ / ₂									
21.	Տօնական այցելութեանց փոխարէն . .	9,119									
22.	Ծաղկեպօտակ յուղարկաւորութեան . .	50,109 ¹ / ₂									
23.	Ծաղկեփունջ հարսանեաց	20,286 ¹ / ₂									
24.	Տարեկան նուագահանդէս	116,041									
25.	Պատսպարելոց թոշակք	<table border="0"> <tr> <td>Ծեր</td> <td>5,796</td> </tr> <tr> <td>Յիմար</td> <td>55,043</td> </tr> <tr> <td>Որբ</td> <td>14,326¹/₂</td> </tr> <tr> <td>Հիւանդ</td> <td>33,441</td> </tr> </table>	Ծեր	5,796	Յիմար	55,043	Որբ	14,326 ¹ / ₂	Հիւանդ	33,441	108,606 ¹ / ₂
Ծեր	5,796										
Յիմար	55,043										
Որբ	14,326 ¹ / ₂										
Հիւանդ	33,441										
26.	Մարց տուրք հիւանդաց	14,593									
27.	Ցկեանս մուտք	1,620									
28.	Դրամական նուէրներ	<table border="0"> <tr> <td>Պարբերական</td> <td>4,380</td> </tr> <tr> <td>Միանուագ</td> <td>133,682³/₄</td> </tr> <tr> <td>Տար. հանդ</td> <td>23,597</td> </tr> </table>	Պարբերական	4,380	Միանուագ	133,682 ³ / ₄	Տար. հանդ	23,597	161,659 ³ / ₄		
Պարբերական	4,380										
Միանուագ	133,682 ³ / ₄										
Տար. հանդ	23,597										
29.	Նիւթական նուէրներ	102,575									
30.	Զանազան հասոյթ	4,037									
31.	Կահագործ Հիւանդանոյի	1,270									
32.	Թիթեղագործ	1,168									
33.	Զուլհակ Հիւանդանոյի	563 ³ / ₄									
34.	Անամարանէ	7,251 ¹ / ₄									
35.	Որբանոյի Արհեստարաններէ	14,362 ¹ / ₄									
36.	Դրամական շահ	3,229									
37.	«Փունջ» գրքի հասոյթ	489									
38.	Կանկառանոց	1,747 ¹ / ₂									
		1,542,181 ³ / ₈									

		Ել				
1.	Մնունդք	529,046 ¹ / ₂				
2.	Վառելանիւթ , լուսաւորութեան նիւթ եւ օճառ	76,742 ³ / ₄				
3.	Հանդերձելէն <table border="0"> <tr> <td>Մաշած</td> <td>107,091¹/₂</td> </tr> <tr> <td>Նորոգութ</td> <td>577³/₄</td> </tr> </table>	Մաշած	107,091 ¹ / ₂	Նորոգութ	577 ³ / ₄	107,669 ¹ / ₄
Մաշած	107,091 ¹ / ₂					
Նորոգութ	577 ³ / ₄					
4.	Դեղօրայք	33,630 ¹ / ₂				
5.	Որբանոյի պաշտօնէից ամսական եւ գպլոցի պիտոյք	78,528 ³ / ₄				
6.	Պաշտօնէութեան ամսական	257,996 ¹ / ₂				
7.	Կարասիք <table border="0"> <tr> <td>Հինցած</td> <td>26,285¹/₄</td> </tr> <tr> <td>Նորոգութիւն</td> <td>14,408¹/₂</td> </tr> </table>	Հինցած	26,285 ¹ / ₄	Նորոգութիւն	14,408 ¹ / ₂	40,693 ³ / ₄
Հինցած	26,285 ¹ / ₄					
Նորոգութիւն	14,408 ¹ / ₂					
8.	Շինութիւնք եւ <table border="0"> <tr> <td>Հիւանդ</td> <td>42,666¹/₂</td> </tr> <tr> <td>Նորոգութիւնք</td> <td>7,586</td> </tr> </table>	Հիւանդ	42,666 ¹ / ₂	Նորոգութիւնք	7,586	50,252 ¹ / ₂
Հիւանդ	42,666 ¹ / ₂					
Նորոգութիւնք	7,586					
9.	Զանազան ծախք (ողորմութիւն , պարգեւ եւայլն)	56,813 ¹ / ₂				
10.	Տպագրական ծախք	6,135 ¹ / ₂				
11.	Գրասենեկաց ծախք , Հոգաբարձու- թեան , Տնօրէնութեան	2,176				
12.	Վարձք Հոգաբարձութ գրասենեկի . .	2,470				
13.	Պարաիզի յարգարում	42,598 ¹ / ₄				
14.	Կալուածական ծախս	46,068 ¹ / ₂				
15.	Կալուածական տուրք	15,195 ³ / ₄				
16.	Ապահովագրութիւն	9,995 ¹ / ₂				
17.	Անցագրատան ամսական	6,000				
18.	Վճարելի կտակ	2,050				
19.	Բժշկական եւ վիրաբուժական պիտոյք	6,858 ¹ / ₂				

20.	Յատկացեալ ամսականաց	10,098
21.	Գանձանակաց համար առանորդ	4,032 ^{1/4}
22.	Վագֆի համար առանորդ և ծախք	3,348 ^{1/2}
23.	Բաժանորդաղբութեան հաւաքչին	480
24.	Նշանառութեան ծախք	3,433
25.	Զէն ու շահ	852 ^{3/4}
26.	Պարզ օրացոյցներու ծախք	22,954
27.	Հնդ. օրացոյցներու ծախք	18,384 ^{3/4}
28.	Հասոյթից առաւելութիւն	107,676 ^{1/8}
		1,542,181 ^{3/8}



ԹԱՂՕՐԱՅՔ Կ. ՊՈԼՍՈՅ

1. ԳՈՒՄ-ԳԱԲՈՒ

Մայր եկեղեցի Ս. Աստուածածին

Առաջին շինութեան թուականն անորոշ . վերաշինուած 1645 , այրած 1718 և վերաշինուած 1719 , վերանորոգուած 1819 և երեք տաճարներու օծումը կատարուած 1820 . Փետր. 26 : Նորէն այրած 1826 , Օգոստ. 18 Պատրիարքարանն ալ ի միասին : Նոր հիմնարկութիւն կը կատարուի 1828 Փետր. 10 , և կը շինուին երեք մեծ եկեղեցիներ և մատուաներ : Օծումը տեղի կ'ունենայ 1828 Հոկտ. 14 : Աւագ եկեղեցին՝ Ս. Աստուածածին նորոգուեցաւ 1902 . հիւսիսային տաճար՝ Ս. Խաչ . հարաւային տաճար՝ Ս. Որդիի Որոնման : Գյիս . մատուներ . — Ս. Յարութիւն և Ս. Ծնունդ :

Քարոզութիւնը կը վարէ Պատրիարքը :

Ժամօրհնող . — Տ. Եղբայ վրդ . Սաշլեան :

Քանանայք . — Տ. Անարոն Ա. քնյ. Խտրշահեան (Ճեռն . 1849) Աւագերէց , Տ. Միքայէլ Աշենան (1882)

Փոխա-աւագերէց , Տ. Խաչատուր Դերձակեան (1879)

Լուսարաւակէ , Տ. Եղիշէ Սէրէնեան (1859) , Տ.

Արիստակէս Ճիզմէհեան (1866) , Տ. Գարեգին

Ղազարուեան (1873) , Տ. Ասկի Օհանեան (1873) ,

Տ. Պողոս Պէյազեան (1882) , Տ. Կարապետ Ստեփանեան (1888) , Տ. Գէորգ Պագալեան (1895) , Տ.

Եղիազար Պողոսեան (1895) :

Քաղ. Խորհուրդ . — Յակոբ Աճառեան՝ Ատենապէտ , Մկրտիչ Մելիքեան՝ Դեր-ատենապէտ , Գրիգոր Մեհմէրեան՝ Ատենադպիր , Յարութիւն իւթիւնեան՝ Գան-

ձավես, Խաչիկ Խանճեան, Գառնիկ Գալաֆեան, Յակոբ Նշանեան, Մկրտիչ Պեղազեան, Գրիգոր Բարազեան, Կարապետ Հալածեան: Դպրաց դաս. — Միհրան Տէր Ահարոնեան՝ Դպրապես, Խաչիկ Խանճեան՝ Փոխ-դպրապես, Գրիգոր Մեհամբեան՝ Դասապետ-ուսուցիչ, Ներսէս Քէօշէեան՝ Ատենապես, Յարութիւն Շիշմանեան՝ Ատենադպիր, Խորէն Մկրտիչեան՝ Գանձապես:

Չորից-քաղից Սղիսաց խնամակալարդրիւմ. — Միհրան Գարագաշեան՝ Ատենապես, Հայկ Խոճասարեան՝ Ատենադպիր, Կարապետ Սրապանեան՝ Գանձապես, Անդրէաս Տէր Անդրէասեան՝ Մատակարար, Ղազարոս Ճերանեան, Տիգրան Օհանեան, Արտաշէս Թաշնեան, Գրիգոր Պարոն-Վարդանեան:

Վարժարանի. — Պեղճեան և Լուսաւորչեան: Աշակերտ 450, Աշակերտուհի 250: — Տեսուչ Հայկ Խոճասարեան:

—

Զ. ԳՈՒՄ - ԳԱԲՈՒԻ ԳՈՒՐՍ

Ա. Ծարուբին

Այս եկեղեցւոյն վերջին շինութիւնն եղած է 1855ին:

Քարողիչ. — Տ. Եղիկի եպ. Ապահովնի:

Քահանայի. — Տ. Խորէն Նորատունկեան (1894) Փոխաւագերէց, Տ. Իգնատիոս Խաչատուրեան (1859), Տ. Գարեգին Տ. Գէորգիեան (1885), Տ. Սուրբիաս Արիստակէսեան (1895):

Քաղ. Խորնուրդ. — Յովհ. Աղնաւուրեան՝ Ատենապես, Ստեփան Բարազեան՝ Ատենադպիր, Անդրանիկ Կարապետեան՝ Գանձապես, Եղիա Միհրանեան, Լեւոն

Եղիսէեան, Մագսուտ Պատմաճեան, Տաքէս Բենիբեան:

Դպրաց դաս. — Գրիգոր Զուհաճեան՝ Դպրապես և Գանձապետ-ուսուցիչ:

Վարժարան. — Պողոսեան և Վառլառեան: Հայոց Մկրտիչ Կարապետեան: — Աշակերտ 126, Աշակերտուհի, 89:

—

3. ԿԵՑԻՔ - ԲԱՇԱ

Ա. Ծալիաննիւ Աւետարանիչ

Այս եկեղեցին առաջին անգամ կառուցուած է 1849ին և Կետիք-Բաշայի հրդեհէն այրելով վերաշինուած է 1876ին:

Քարողիչ. —

Քահանայի. — Տ. Յովհ. Մերկերեան (1877) Աւագերէց, Տ. Յակոբ Բարազեան (1874), Տ. Եղիա Կարապետեան (1888), Տ. Տրդատ Պոյտաճեան (1895), Տ. Գևորգ Զարգաւաթճեան (1895), Տ. Մարտիրոս Գալքային (1899):

Քաղ. Խորհուրդ. — Մարտիրոս Էնքսերճեան՝ Ատենապես, Կարապետ Բարազեան՝ Ատենադպիր, Գալուստ Եէկէնեան՝ Գանձապես, Կարապետ Մագսուտեան, Նիքոլ Պարոնեան:

Դպրաց դաս. — Գրիգոր Մեհամբեան՝ Դպրապես, Յովհ. Մեհամբեան՝ Դասապետ-ուսուցիչ, Յովհ. Բարազեան՝ Ատենապես, Երուանդ Քէօսէեան՝ Ատենադպիր, Վահան Երէցեան՝ Գանձապես:

Վարժարան. — Ո. Մերորակեան: Աշակերտ 134, Աշակերտուհի 125: — Տեսուչ Կարապետ Տէմիրեան:

—

4. Ե Հ Ն Ի - Գ Ա Բ Ո Ւ

Ս. Թաղեսու և Ս. Քարոզիմեսու առաժենալի

1846 Ապրիլ 6ին կատարուած է այս եկեղեցւոյ հիմնարկութիւնը, շինութիւնը Յունիս 9ին կատարած և Յունիս 18ին կ'օծուի :

Քահանայի. — Տ. Բարթողիմէոս Պողոսեան (1859) Փոխ-Աւագերեց, Տ. Արքոսակէս Վարժապետեան (1889), Տ. Յուսիկ Քաջունի (1886) :

Թաղ. Խորհուրդ. — Մարտուքէ Ֆրէնկեան՝ Ատենավետ, Գառնիկ Վանլեան, Նշան Ազարեան, Մկրտիչ Բարմագսըգեան, Պետրոս Անդրանիկեան :

Կարծարանի. — Ս. Առաքելոց և Հայկանուշեան : Աշշակերտ 115, Աշակերտուհի 49 : — Տեսուչ Գրիգոր Գույումձեան :

—

5. Ս Ա Մ Ա Թ Ի Ա

Ս. Գէօրգ

Ս. Գէօրգ որ վաղեմի եկեղեցի մըն է՝ ԺԶ. դարուն եղած է Հայոց Ազգ. Պատրիարքարանի աթոռ, մինչեւ 1640 : 1722ին Յովհաննէս Կոլոս Պատրիարք նորոգեց այս եկեղեցին, և անոր կից տաճար մըն ալ կառոյց յանուն Ս. Երրորդութեան : Կար նաև ասոնց կից ուրիշ տաճար մըն ալ յանուն Ս. Աստուածածին : 1782ի մեծ հրդեհին այրեցան այս երեք եկեղեցիները : 1804ին դարձեալ վերաշնուրեցաւ Ս. Գէօրգ, և 1832ին նորոգուելէ ետք, 1866ին Սամաթիոյ մեծ հրդեհին կրկին այրեցաւ այս եկեղեցին, որ և հիմէն կառուցաւ 1886-1887: Օծումը կատարուեցաւ 1887 Փետր. 8:

Քարոզիչ . —

Քահանայի. — Տ. Յովհաննէս Շահպաղեան (1867) Աւագերեց, Տ. Թաղէսու Սիմոնեան (1869) Փոխ-Աւագերեց, Տ. Եկրուս Տ. Եղիշէեան (1869), Տ. Փիլիպպոս Տ. Յակոբեան (1869), Տ. Կարապետ Յակոբեան (1878), Տ. Աբգար Արապեան (1884), Տ. Անանիս Յակոբեան (1887), Տ. Արքոսակէս Հիսարլեան (1896), Տ. Եղիշէ Մանաւեան (1899), Տ. Արքովիք Ներշապուհեան (1899) :

Թաղ. Առժ. Խորհուրդ. — Միհրան Կարապետեան՝ Ատենավետ, Ասկիան Յակոբեան՝ Ատենադպիր, Մանուկ Վարդանեան, Թորոս Մկրտիչեան, Տիգրան Նշան թաճեան :

Աղյամախնամ. — Յարտութիւն Մինչարեան՝ Ատենավետ, Ենովլք Թէյեան՝ Ատենադպիր, Միհրան Զանայեան՝ Գանձավետ, Ասկիան Յակոբեան, Սեփոն Թոփուղեան, Լեւոն Թերզեան, Մկրտիչ Զարմայրեան :

Դպրաց դաս. — Կարապետ Տէր-Անդրէասեան՝ Դպրապետ և Դասավետ-ուսուցիչ :

Վարժարանի. — Ս. Սահակեան, Նունեան-Վարդուհեան՝ Աշակերտ 189, Աշակերտուհի 168 : — Տեսուչ իսրայէլ Հայկապն :

—

6. Ա Լ Թ Բ Մ Ե Ր Մ Է Ր

Գլխադիր Ս. Յակոբ

Այս եկեղեցին չինուած է Ս. անդամ 1858ին : Օժումը տեղի ունեցաւ նոյն տարին Յուլիս 18ին, Յակոբ Պատրիարքի օրով : Կրկին կառուցուեցաւ 1892ին և օծուեցաւ Տ. Խորէն Աշքեան Պատրիարքին : Առժամանակ Քարոզիչ. — Տ. Կորիւն վրդ. Եսայեան :

Քահանայի. — Սամաթիոյ :

Թաղ. Խորհուրդ. — Գէօրգ Ճիշմանեան՝ Ատենավետ, Ար-

շակ՝ Քիրէճճեան՝ Ատենապիր, Գրիգոր Աղամեան՝
Գանձապէս, Սինեմ Նիկոլոսեան, Մարտիրոս Յա-
կոբեան, Տիրան Լոգմաեան :

Վարժարան. — Ներսէսեան : — Աշակերտ 22, Աշ-
կերտուհի 7 :

7. ՆԱՐԼԻ ԳԱԲՈՒ

Ա. Յովիանենէս Աւետարանիչ

Այժմեան եկեղեցին կառուցուած է 1807ին, հոս կը
դատնուէր Ա. Փրկչեան Հիւանդանոցը՝ անցեալ դարուն
միկրոբ :

Քարոզիչ. — Տ. Տաճառ Ծ. Վրդ. Ռոկանեան :

Քահանայի. — Սամաթիոյ :

Թաղ. Խորհուրդ. — Յակոբ Գրիգորեան՝ Ատենապէս, Իս-
րայէլ Հայկազն՝ Ատենապիր, Լեւոն Սարափեան՝
Գանձապէս, Աթանիկ Գալֆայեան, Յարութիւն
Ֆերհատեան, Կարապետ Բաբազեան :

Վարժարան. — Խորհունեան և Վարդապեան : — Աշ-
կերտ 67, Աշակերտուհի 39 :

8. Թ. Ո. Փ Գ. Ա. Բ Ո Ւ

Ա. Նիկոլայոս

Այժմեան եկեղեցին հիմնուած է 1832ին :

Քարոզիչ. —

Քահանայ. — Տ. Առում Խաչատուրեան (1899) :

Թաղ. Խորհուրդ. — Սիմոն Ալթունճեան՝ Ատենապէս, Ար-
տաշէս Կարդանեան՝ Ատենարպիր, Պետրոս Զի-
մենեան՝ Գանձապէս, Լեւոն Միթարեան, Գրիգոր
Ալեանագեան :

Վարժարան. — Լեւոնեան և Վարդուհեան: — Աշակերտ
66, Աշակերտուհի 28 :

9. Պ Ա. Լ Ա. Թ.

Ա. ՃԵԿԵԱԼԻԱՎԻՏ

Այս եկեղեցին որ Պոլսոյ նշանաւոր հայ եկեղեցինե-
րէն է, յունական եկեղեցի մըն էր և հայոց յանձնուեցաւ
1631ին՝ ըստ Երուսաղէմի Գրիգոր Պարտո-Տէր Պատ-
րիարքի յիշատակարանին և 1636ին՝ ըստ Երևմիա չե-
լեպիի ժամանակագրութեան: Եկեղեցին Հայոց յանձ-
նուելէն ետքը, նորոգուեցաւ շնորհիւ Երուսաղէմի յիշ-
եալ Գրիգոր Պատրիարքին, Արիստակէս վարդապետի
և Պոլսոյն Աստուածատուրին: 1729ին Ա. Հրեշտակա-
պետ եկեղեցին այրելով Ցովհաննէս Կոլոս Պատրիարք
վերաշնեց զայն անմիջապէս, Սեղբոս ամիրայի ձեռն-
տուութեամբ: 1835ին, Ստեփաննոս Աղաւնի Պատրիար-
քին օրով, վերջին անգամ նորոգուեցաւ այս եկեղեցին:
Քարոզիչ. — Տ. Թաթուլ Ծ. Վրդ. Դուրեան :

Քահանայի. — Տ. Միքայէլ Ա. Քնչյ. Վարժապետեան
(1859) Աւագերէց, Տ. Վահան Գրիգորեան (1876)

Փոխ-աւագերէց, Տ. Արել Երեցեան (1886) Լուսա-
րարապէտ, Տ. Գրիգոր Արքահամեան (1894) :

Թաղ. Խորհուրդ. — Համբարձում Եէմէնիմեան, Գրիգոր
Զորաեան, Միսաք Յովիլանեան, Հայկասէր Արիկ-
եան, Մանուկ Ճելվահիմեան, Սահակ Գլուհեան,
Յարութիւն Ճաֆճաֆեան, Հայկ Ճանիկեան, Մար-
տիրոս Էօքսիւզեան :

Դպրաց դաս. — Կարապետ Առաքել Պալտառլեան՝ Դըպ-
րապէտ՝ Միհրան Ճերահեան՝ Դասապէտուուցիչ,
Արշակ Տողրամանեան՝ Ատենապէտ :

Աղյատայնամ. — Տ. Արել քնչյ. Ատենապէտ, Յարու-

Թիւն Սահաթճեան՝ Ասենադպիր, Տ. Վահան քնյ.
Գանձապէս, Գարեգին Բամպագճեան, Գէորգ Գա-
րիսկեան, Պողոս Խթիւճեան, Սահակ Գլճեան:
Վարժարան. — Խորենեան: — Աշակերտ 84, Աշակեր-
տուհի 70: — Տեսուչ Գէորգ Միմքէշեան:

10. ԷՅՈՒԹՊ-ՏԵՖԹԵՐՑԱՐ

Ա. Խորիս

Այս եկեղեցին կը յիշուի Ժ. Պարէն սկսելով:
Ժողովրդային հանգանակութեամբ նորոգուած է 1800ին
և Դանիէլ Պատրիարքի օրով օծումը Կատարուած Մարտ
26ին: 1832ին հիմէն նորոգուած է Պեղճեան Յարու-
թիւն ամիրայի քրոջ՝ Մերկերեան Գէորգ աշայի կողա-
կից Տիկին Համասխիւսի ծախըռով:
Քահանայ. — Տ. Գրիգոր Թեղեքելեան:
Թաղ. Խորհուրդ. — Սեպուհ Ալեանագեան՝ Ասենապէս,
Մկրտիչ Նարեկան՝ Ասենադպիր. Գէորգ Յովակիմ-
եան՝ Գանձապէս, Մկրտիչ Սերովլեան:
Վարժարան. — Պեղճեան: — Աշակերտ 29, Աշակեր-
տուհի, 10:

11. ԷՅՈՒԹՊ

Ա. Սատուածածին

Այս եկեղեցին ալ կը յիշուի Ժ. Պարէն. 1855ին
հիմէն նորոգուած է հանգանակութեամբ:
Քահանայ. — Տ. Յարութիւն Դերձակեան (1880):
Առժամ. Թաղ. Խորհուրդ. — Գէորգ Վարժապետեան՝
Ասենապէս, Կարապետ Լալիկեան՝ Ասենադպիր,
Գառնիկ Մամասեան:
Վարժարան. —

12. Խ. Ա. Ա Ք Է Օ Յ

Ա. Ստեփանոս

Խասքէօյի հայերը նախ կը վերաբերէին Պալաթու-
թաղին, բայց յետոյ 1729ին ունեցան փայտաշէն եկե-
ղեցի մը: 1804ին վերաշնուրեցաւ և 1831ին այժմեան
եկեղեցին կառուցուեցաւ:

Քարոզիչ. — Տ. Տիրայր Վրդ. Մարգարեան:

Քահանայ. — Տ. Մինաս աւագ քնյ. Պեղաղեան (1862)

Աւագերէց, Տ. Արքահամ Տ. Կիւրեղեան (1878) Փոխ
աւագերէց, Տ. Համբարձում Դերձակեան (1884):

Թաղ. Խորհուրդ. — Եղիա Շահպաղ՝ Ասենապէս, Պրի-
գոր Ադամեան՝ Ասենադպիր, Կարապետ Թիրեաք-
եան՝ Գանձապէս, Տոքթ. Յակոբ Քեմճամեան, Յով-
սէփ Մերտումեան, Պրիգոր Պալըգճեան և Յակոբ
Կիւրձեան:

Աղյատայնամ. — Տ. Արքահամ քնյ. Տ. Կիւրեղեան՝
Ասենապէս, Թագւոր Քերեսումեան՝ Ասենադպիր,
Մաքուտ Միւնկիւմեան՝ Գանձապէս, Միհրան Ճիզ-
